

\* \* \*

## ԼԵՒՈՐ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅԻ

Երբ ես տեսնում եմ, որ մոլեգնաբար  
Եղբայր եղբոր դէմ դարան է գործում,  
Եւ մարդիկ չընչին շահերի համար  
Մատնում են իրար և դաւաճանում.  
Երբ ես տեսնում եմ—սիրոյ դիմակով  
Ծածկւած անսահման ինքնասիրութիւն,  
Իդէալների շողջողուն փայլով  
Քողարկւած կոպիտ նիւթապաշտութիւն,—  
Այդժամ ակամայ ինձ այցելում է  
Յոռետեսութեան մոլեգին ոգին,  
Եւ լոյս-աշխարհըն աչքիս ընկնում է  
Այդ չարաբաստիկ մըռայլ լոպէին.  
Եւ իմ շըրթունքից կարծես ուզում են  
Թափւել անէծքներ մարդկութեան վերան,  
Ես ապրստամբւում, ալէկոծւում եմ  
Անողորքելի ովկեանի նըման:  
Ել չը կայ այդժամ ինձ համար աշխարհ,  
Ուր անկեղծ սիրով մարդիկ են ապրում.  
Այդժամ կայ միայն մի վայրի անտառ,  
Որտեղ գոյութեան արիւննուշտ կըռւում  
Արիւնածարաւ գայլեր են վըխտում...

Բայց յանկարծ ահա սըրտիս խորքերից  
Լըսում եմ ազնիւ բարկութեան գոչիւն.  
«Մի՛թէ մոռացար Քրիստոսի ճակտից  
Առւակի նըման կարկաջող արիւն,

Մի՛թէ մոռացար

Այն հազարաւոր մարտիրոսներին,  
Որ սուրբ արիւնով, մահով չարաչար  
Նորա կըտակը մեզ աւանդեցին...»  
Եւ իսկայն արագ բարձրանում է  
Ահա վարազոյրն հեռու անցեալի,  
Եւ աչքիս առջև ներկայանում է  
Մի սուրբ բազմութիւն նահատակների:

Ահա ներոնի հեթանոսական

Խաւար պարտիզում վառ վառ ճըրաքներ—  
Զինւորներ են այն Քրիստոսի անուան,  
Կենդանի մարդկանց վառւող մարմիններ,—  
Փայլուն վրկաներ մարդասիրութեան:  
Ահա կըրկէսի լայն ասպարիզում  
Հռովմի զոհերը շարեշար կանգնած...  
Պիտի յօշոտին վազրի ճանկերում  
Մարդկային սիրով նոքա տոգորւած:  
Ահա ճարճատող խարսկի վերան  
Բոցավառւում է կենդանի մարմին—  
Մեռնում է յանուն մարդասիրութեան,  
Բայց ջերմ աղօթք է նորա բերանին...  
Իմ աչքի առջև գալիս անցնում են  
Անվերջանալի կորովի դէմքեր  
Եւ ջերմ հաւատով նոքա պարսպում են  
Մահաբեր թոյնով լի-լի բաժակներ,  
Եւ իմ սըրտի մէջ խորը ցայտում են  
Նոցա կըշտամբանք, նոցա հայեացքներ...



Ո՛հ, սի՛րտ իմ, սի՛րտ իմ. մէթէ մարդկային  
 Զերմ, արի արեւն չէր քո մէջ խաղում,  
 Որ այն նենգ, մոլար, չար ոգու ձեռին  
 Պըղտորում էիր և ալեկոծում...  
 Այս չար խաւարում վառւի՛ր դու կըրկին.  
 Ոհ, սի՛րտ իմ, ինչ տար դէպ՝ իմ ցանկութիւն,  
 Եւ թո՛ղ ուղեցոյց աստղերըդ լինին  
 Պայծառ գեղարեւոտ և խոր գիտութիւն:

Մօսկւա, 1889 թ., 18 օգոստոսի: